ԱՄՆի ԿՈՆԳՐԵՍՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵՑ ՆՈՐ ԲԱՆԱՁԵՒ

Ուաշինկթոն, ՄՏԿ.- Յունիսի 3ի յետմիջօրէին, Ամերիկայի Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների տան (Կոնգրես) առջեւ ներկայացուեց 26 պատգամաւորների կողմից ստորագրուած մի բանաձեւ, գլխաւորութեամբ պատգամաւորներ Դէյվիտ Բոնիորի եւ Ուէյն Օուընսի, որով դատապարտում են հայ խաղաղասիրների վրայ խորհրդային եւ ազերի յարձակումները եւ պահանջում է Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան տեղահանութեան անմիջական դադարեցումը: Բանաձեւը նման է Մայիսի 18ին ԱՄՆի Սենատի (Սենատ) կողմից միաձայնութեամբ որդեգրը-

Շար. էջ 2 →

ԱՄՆի ԿՈՆԳՐԵՍՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵՑ...

→ Սկիզբը՝ էջ 1

ւած բանաձեւին:

«Ներկայացուցիչների տան բանաձեւը մի անգամ եւս վկայում է, որ Միացեալ Նահանգների օժանդակութիւնը Խորհրդային Միութեանը եւ Խորհրդային կառավարութեան ոչ-ժողովրդավարական վարուելակերպը հակադարձ յարաբերութեան մէջ են», յայտարարեց Հայ Դատի Ուաշինկթոնի գրասենեակի վարիչ-տնօրէն ընկեր Սեդօ Պոյաճեանը, եւ աւելացրեց. «Երկրի ամբողջ տարածքին, Հայ Դատի յանձնախմբերը դիմելու են լայնածաւալ աշխատանքի ապահովելու բանաձեւի անցկացումը, որը շուտով յղուելու է Եւրոպայի եւ Միջին Արեւելքի հարցերի ենթայանձնաժողովին»:

Բանաձեւում թուարկուած են Խորհրդային եւ ադրբեջանական յարձակումների նկատմամբ Ներկայացուցիչների տան կեցուածքի կէտերը հետեւեալ ձեւով.

1.- դատապարտում է քաղաքացիների հանդէպ յարձակումները.

2.- դատապարտում է ուժի անհարկի օգտագործումը.

3.- կոչ է ուղղում Հայաստանի եւ Ղարաբաղի շրջափակումները դադարեցնելու.

4.- կոչ է ուղղում երկխօսութեան՝ խնդրին առնչուող բոլոր կողմերի միջեւ.

5.- վերահաստատում է ԱՄՆի յանձնառութիւնը Խորհրդային Միութեան եւ տարբեր հանրապետութիւններում ժողովրդավարութեան եւ ինքնորոշման յաջողութեան նկատմամբ.

6.- կոչ է ուղղում Ղարաբաղից հայերի տեղահանման անմիջական դադարեցման եւ բոլոր տեղահանուածների վերադարձի ազատութեան: